ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Prederiksoans LSD-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/65 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Թատրոնի բեմի լուսային համակարգը բաղկացած է լեդ լուսատու սարքերից, թվային ցանցային ազդանշանը լուսային ազդանշանի փոխակերպիչ սարքից, թվային ազդանշանի բաժանարարից, լույսի ազդանշանի թվային մալուխից, թվային մալուխի ծայրակալևներից, հոսանքի մալուխներից, մալուխային վարդակներից և խրոցակներից, հոսանքի բաժանարարներից, որոնք պետք է համապատասխանեն կից ներկայացված Տեխնիկական առաջադրանք-1-ին: Եթե անհրաժեշտություն առաջանա, Վաճառողը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել Տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված՝ լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, ինչպես նաև համապատասխան մասնագետի հրահանգավորումը իրականացվում է Գնորդի կողմից: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել գնորդի հետ՝ կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին: Վաճառողը պարտավոր է գործիքազննողական ուսումնասիրության ենթարկել թատրոնի դահլիճում գործող էլեկտրասնուցման ներքին ցանցը

	(անհրաժեշտության դեպքում նաև արտաքին) և անհրաժեշտության դեպքում փոխարինել համապատասխան հաղորդալարերով և էլեկտրատեխնիկական սարքավորումներով՝ սույն չափաբաժնի ապրանքների համար Էլեկտրատեղակայանքների կառուցման կանոններին համապատասխան: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ թատրոնի դահլիճում գործող էլեկտրասնուցման ներքին ցանցին:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Prederiksoans LSD в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/65 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	